

08.05.2012

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ


Ջերմորեն շնորհավորում եմ Հաղթանակի և խաղաղության տոնի առիթով ու ցանկանում, որ հաղթանակի բերկրանքը մշտապես ուղեկցի մեր ժողովրդին:

Այս տոնն իր մեջ ներառում է հայ ժողովրդի հերոսական և փառահեղ պատմության հաղթական էջերն ու իրեն հատուկ տոնական տրամադրություններ տարածում ամենուր:

Մայիսյան հաղթանակների հավաքական խորհուրդն ազդարարող այս բացառիկ օրվա շրջանակներում մեր շնորհավորանքներն ենք հղում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց ընտանիքներին, Շուշիի ազատագրման կարևորագույն գործընթացին մասնակցած բոլոր նվիրյալներին, հավերժ փառքի արժանացնում բոլոր հերոս նահատակներին և դարձյալ փաստում, որ հաղթանակների այս շարքը հայրենասիրության մի յուրօրինակ դաս է նորօրյա սերնդի համար:

Մայիսի 9-ի տոնական ու հաղթական զգացողություններով ևս պետք է բարենաղթենք, որ հայոց նորագույն պատմությունն այսուհետ նշանավորվի նորանոր հաղթանակներով և մեր հաղթական երթն ունենա իր հաստատուն շարունակությունը:

Հարգանքներով


Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ